




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մաղթանքը վանքի
մայր-եկեղեցում. Մեր չերամպանութիւնը. Ներ-
քին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ. — ՖԵԼԻՏԵՏՈՆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՂԹԱՆՔ ՎԱՆՔԻ ՄԱՅՐ-ԵԿԵԼԵՑՈՒՄ

Մարտի 23-ին, կիրակի օրը, վանքի մայր-եկե-
ղեցում գումարդական մաղթանք կատարվեցաւ
Ռուսաց կայսեր կենաց համար: Հաւաքված էր
շատ մեծ բաղնիքներ, որպիսին շատ քիչ կը պա-
տահի տեսնել վանքի եկեղեցում. Ս. պատարա-
զից յետոյ, մաղթանքից առաջ, ու առաջնորդ
Արքիմանդիտ եպիսկոպոսը դառնալով ժողովրդին
եկեղեցու բեմից, խօսեց հետեւեալով:—«Չոր ամեն-
քին այստեղ խմբվել այդքան բաղնիքներ մի
արտասովոր երևոյթ է: Եկել էք լսելու մի ուրա-
խալի լուր, և ես ինձ բաղնիքում եմ համարում,
որ եկեղեցու սեղանից պիտի հաղորդեմ ձեզ այդ
ուրախալի նորութիւնը: Վեհափառ կաթողիկոսը
Էջմիածնի մայր տաճարում գումարդական մաղ-
թանք է կատարել կայսրի կենաց համար, և կայ-
սրի հոգեւոր հայրը կատարել ամենայն տեղ: Հայ ժո-
ղովուրդը իր պատմական կեանքի դեռ շատ վաղ
ժամանակներից սկսած իր եկեղեցու մէջ է գտել
իր ուրախութիւնը: Չը նայած որ Մայր-Աթոռը
շատ անգամ ինքը եղել է թշուառ դրութեան
մէջ, բայց միշտ կարողացել է միմիայն իր վը-
տահար հօտը: Նա միմիայն է իր հօտը, ուսու-
ցանքով նրան հաւատարիմ լինել տէրութեան օ-
րէնքներին և եկեղեցու ոգուն: Այդ պատճառով
Մայր-Աթոռը միշտ վայելել է պիտութիւնների
հովանաւորութիւնը: Նոյն իսկ պարսկական և օս-
մանեան հալածանքների ժամանակ Էջմիածինը
հովանաւորութիւն է գտել: Այդ երկարատե թըշ-
ւառութիւնների ժամանակներից սկսած նախա-
նախնիների վերապահել էր Էջմիածնին մի լաւ
ապագայ, որի ժամանակ նա կարող լինի ըստ
արժանւոյն առաջնորդելու իր հօտը: Այդ ժամա-
նակը հասաւ Ռուսաց հովանաւորութեան շնորհիւ:
Կէս դար է անցնում արդէն, որ Արարատեան նա-
հանգը և Մայր-Աթոռը գտնուելու են Ռուսաց կա-

ռավարութեան իշխանութեան ներքոյ, և այդ բո-
ւոր ժամանակը Մայր-Աթոռը վայելել է ազատու-
թիւն: Ընամեղու իր հօտը, որովհետեւ Ռուսաց
կայսրները միշտ մի ձգտում են նկատել Մայր-
Աթոռը մէջ, այն է կրթելու իր հօտը այնպէս, որ
նա լինի եկեղեցու զաւակ և կառավարութեան
հաւատարիմ հպատակ: Այն ժամանակից սկսած
Ռուսաց կայսրների խնամքը անպակաս է եղել
դէպի Էջմիածինը և Մայր-Աթոռի գահակալները:
Նոյն ժողովուրդը միշտ վայելել է աւելի քան միւս-
ները և կարողացել է պահպանել իր եկեղեցու և
մայրենի լեզուի ապահովութիւնը, և կառավարու-
թեան օրէնքը տուել է եկեղեցուն հաստատու-
թիւն և դպրոցներին ծաւալում, որով և
մինչ ունենէ մեր ազգային եկեղեցուն կից ղըս-
րոցները:—Ամէնքին հասկնալով է, որ Էջմիածնի
կաթողիկոսական գահի երեք տարի թափուր մը-
նակ մի մեծ հարուած էր մեր ընդ որոշների հա-
մար, և հէնց այդ թափուր ժամանակն էր, որ ի
մեծ ցաւ մեզ ամենքս, մի քանի դժուարութիւն-
ներ առաջ եկան դպրոցական ինքրի մասին: Սա-
կայն Մայր-Աթոռի կաթողիկոսական գահի վերա-
միջ սե քօղի վերանալով, վերացան և այդ դժ-
վարութիւնները: Բարձրանալով հայրապետական
գահը, Վեհափառ առաջին գործը եղաւ դպրոցնե-
րի գործը, որոնցով կարելի կը լինի պատրաստել
ազգի համար լաւ անդամներ և լաւ հպատակներ:
Այդ մասին Վեհափառը դիմում է կայսրի հանդ-
քին և Հայրապետի բարեխն խնդրածքը հանդի-
պում է կայսրական շնորհաց: Էջմիածնից եկած
հեռագրից իմանում ենք, որ Վեհափառը իր խըն-
դրել կատարումն է ստացել, որով և Օգոստոսի
կայսրը իր խնամքի մի նոր ապացոյցը բարեհա-
ճել է ցոյց տալ դէպի հայոց եկեղեցին, խնամք
արժանի հաւատարիմ ժողովուրդեան և նրա որդե-
սէր հայրապետին:

Այդպիսով հայ ժողովուրդեան մի մեծ ուրախու-
թեան առիթ է ներկայանում, և այդպիսով նոյն
ժողովուրդը պարտաւորվում է Ռուսաց կառավա-
րութեան կէս դար ցոյց տուած հաւատարմու-
թիւնը շարունակել որոշ օրով և պահպանել իր
մէջ առ Մայր-Աթոռն ունեցած սէրը: Այդ երկու
յատկութիւնները կը լինեն Ռուսաց կայսրի երջան-
կութեան աղբիւրը: Հաւատարիմ լինելով կառա-
վարութեանը, միշտ միշտ կը վայելենք նրա շնոր-
քը, և հաւատարիմ լինելով Էջմիածնին, մենք
ուր կը խոստովանենք, որ չարաքանց հայ եկե-

ղեցոյ, հայի համար չը կայ ուրախութիւն: Այդ
համարութիւնը մեր պատմութեան մէջ ապացուց-
ված է: Ահա այս ուրախութիւնը ձեզ հաղորդ-
վում է եկեղեցու մէջ, և այդ մեծ փաստ է, որ
դուք կապուած էք Էջմիածնի և նրա գահակալի
հետ, և սերտ չը կապուել Մայր-Աթոռի հետ կը
նշանակէ զիստով նոյն իսկ ազգութեան գոյու-
թեանը:

Եւ թարգման եմ հանդիսանում այս մեծ ու-
րախութեան, և հաղորդում եմ ձեզ որ մօտիկ ա-
պագայում կը շարունակեն ձեր որդոց ուսումը և
գիտութիւնը:

Այժմ, սիրելիք, քաղցր պարտականութիւն է
մնում մեզ վրա, ի ընդ որոյ արտէ ուղղելով մեր
ջերմեւանդ հայցումը դէպի Ամենակարգին Աս-
տուած, խնդրել որ Նորին կայսերական Մեծու-
թեան մեր Ամենազորեմեծ Թագաւոր Ալեքսանդր
Ալեքսանդրովիչին երկար իկանք, առողջութիւն և
բարորդութիւն սղարդել, ի միմիայնութիւն իր սի-
րելի և հաւատարիմ հպատակաց: Մաղթել նաև
երկար կեանք և առողջութիւն Վեհափառ Հայրա-
պետին մերոյ, որ բաղնիքով ի գահ կաթողիկո-
սութեան ազգիս, իր հոգատարութեանց առաջինը
համարեց լցուցանել այն մեծ պէտքը, որ մի գա-
րուց աւելի ծանրացել էր մեզ վրա: Ընդ նմին չը
մոռանալք երկար կեանք մաղթել ի Տեառնէ
Աստուծոյ և երկրի իշխան կառավարչապետի
համար, որ չը խնայեց իր կողմից իր միջնորդու-
թեամբ և բարեխոսութեամբ Օգոստոսի առաջին
առաջ լրումն տալ կովկասի հայոց բաղձանաց
համաձայն միջնորդութեան Նորին Վեհափառու-
թեան. իսկ ձեզ ամէնքիդ համար կը մաղթեմ
Աստուծոյ կարողութիւն և զօրութիւն արդիւնա-
ւորելու Վեհափառ Հայրապետի խնամատար աշ-
խատութիւնը և Օգոստոսի առաջին որդւմու-
թեան շնորհքը:

ՄԵՐ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Օգոստ քաղելով այն հանգամանքից, որ այս-
օրուան օրս, համարեա, հերթական հարց է դար-
ձած տեղոյս լրագրիչների համար կովկասեան չե-
րամապահութիւնը և որի պատճառով կովկասեան
Գլխաւորապետական ընկերութիւնը քանի մի նիս-
տեր ունեցաւ շնորհիւ պ. Լեւիտայի, մենք մեր կող-
մից պարտաւորութիւն ենք համարում ծանօթաց-
անելով, այդպիսով հետաքրքրել դարձնել և տա-
րածել լրագրիչ հասարակութեան մէջ: Չիղիա-
նեան, կարծելով թէ ես չեմ գրել ֆելիետոնս, այլ
ինքն խմբագրել, ասում է թէ այդ տեսակ բան
անկը անարժան բան է մի մարդու կողմից, որ
գերմանական համալսարանումն է սովորել: Ի
հարկէ, նա աւելի լաւ գիտէ: Նա էլ Գերմանիա-
յումն է սովորել, ուրեմն դիմել թէ այդ տեսակ
բաներ բարոյական Գերմանիայում չեն անում,
բայց ես, մի հասարակ Աթոյից լինելով, որ եր-
բէք Գերմանիա տեսած չեմ, ես ձրտեղից պիտի
գիտենայի թէ Գերմանիայում այդ տեսակ բաներ
չեն անում:

Այժ, լաւ բան չեմ արել, գովելի վարմունք չեմ
դա իմ կողմից. և այն էլ մեծ պատիւ, երբ պէտք
է ամենքի հետ հաշտվել, փոխադարձապէս ներել
մեղքերը, իր մեղքերն էլ քաւել, մեղաւ ասել...
Իսկ ես, ես ինչ եմ արել... Տէր-Աստուծոյ...
Ուրեմն մեղաւ եմ ասում, մեղաւ, երբեք ան-
գամ մեղաւ:

Եւ որովհետեւ հիմա մեծ պատի վերջին շաբաթն
է, և ահա մի քանի օրից յետոյ Ձատիկն է
գալիս, ուրեմն պէտք է հաշտվել, որովհետեւ Ձատ-
ի տօնին սովորութիւն կայ միմեանց փոխադար-
ձապէս կարմիր ձուկեր ընծայել և առհասա-
րակ միմեանց ընծայելու տարւոյս—եւս էլ ուզում
եմ իմ մեղքը քաւելու և ամենքի հետ հաշտվելու
համար, բոլոր իմ լաւ ծանօթներին մի մի կար-
միր ձուկ տալ, մի մի ընծայ անել, կամ գոնէ

նեղ յարգոյ ընթերցողներին «Новое Обозрение»
լրագրի № 765 մէջ տպված առաջնորդող յօդու-
ածի հետ միայն նրանից ամենապիտան քաղաքա-
ներ անելով: Յօդուածագիրը օգուտ է քաղում Ն.
Կ. Ջէյդլիցի կազմած չերամպանական վիճակա-
գրութիւնից, որ նա կատարել է կառավարութեան
կողմից, 1882 թվին իրան տուած պատէրի համե-
մատ: Պ. Ջէյդլից շրջագայել է 1882 թվին չերա-
մապանութեամբ պարագոյ միայն ութ գաւառնե-
րում և մանրամասն տեղեկութիւններ է հաւաքել,
համարեա ամեն մի չերամպանական առանձին ա-
ռանձին հարց ու փորձ անելով և որոնք, ցաւի
է ասել, պարզ կերպով ցոյց են տալիս թէ որ
աստիճան թշուառ դրութեան մէջ է գտնվում
կովկասեան չերամպանութիւնը: Թւանշանները
աւելի լաւ փաստաբաններ են քան թէ երկարա-
ձիգ յօդուածներ, հէնց այս պատճառով բերում
ենք այստեղ պ. Ջէյդլիցի տուած թիւերը:

Ձաքաթալի շրջանում չերամպանութեամբ
պարագում են 58 գիւղերի բնակիչներ 10,980 հոգի:
1860 թվականի սկզբներում պահում էին այստեղ
541 ֆունտ չերամպան, որից ստացվում էր 10,199
պուդ բոժոժ. այն ինչ 1882 թվին պահել են 959 ֆ.
սերմ և ստացվել է միայն 2,472 պ. բոժոժ:

Գ. Ե. Կ. չալի գաւառում չերամպանութեամբ
պարագում են 38 գիւղերի բնակիչներ,—1860
թվականի սկզբներում պահած 937 ֆունտ սեր-
մից ստացվել է 9,238 պուդ բոժոժ, իսկ 1882
թվին 1,071 ֆունտ սերմից ստացվել է 1,409
պուդ բոժոժ: Ձաքաթալի շրջանում չաւառում
չերամպանութեամբ պարագում են 88 գիւ-
ղերի բնակիչներ, որոնք, մինչև որդի հիւան-
դութեան երեւալը, պահում էին 251 ֆունտ
սերմ և ստանում էին 4,068 պուդ բոժոժ.—1882
թվին պահած 213 ֆունտ սերմից ստացվել է
1,426 պուդ բոժոժ: Ն. Կ. Կ. գաւառում, բացի
քաղաքից, 24 գիւղերի բնակիչներ 2,413 այգետե-
րի,—1860 թվականի սկզբներում 949 ֆունտ
սերմ պահելով ստանում էին մօտ 14,737 պուդ
բոժոժ. այն ինչ 1882 թվին 1,140 ֆունտ սերմից
ստացել են 1,627 պուդ բոժոժ: Լանքարանի
գաւառի 16 գիւղերի բնակիչներ, 102 այգետե-
րի մինչև 1867 թվադ պահելով 70 ֆունտ սերմ, ստա-
նում էին 657 պուդ բոժոժ. այն ինչ 1882 թվին
77 ֆունտ սերմից ստացել է 255 պուդ բոժոժ:
Գ. Կ. Կ. չալի գաւառի 9 գիւղի բնակիչները մինչ
1859 թվադ ստանում էին 4,800 պուդ բոժոժ. իսկ

մի մի բարի ցանկ ու թիւն յայտնել իւրաքան-
չիւրին:

Եւ ես կը բաժանեմ իմ պատրաստած ընծա-
ներս ոչ թէ միայն նրանց, որոնք յիշված էին իմ
նախկին ֆելիետոնում, բայց և ուրիշ շատերին,
որոնց անունները չը կային էլ ինչեւէ դժբաղդ
ֆելիետոնում: Ուզում եմ որ ամենքը, ամենքը ու-
րախ լինեն Ձատիկի տօնին:

Ուրեմն սկսում եմ բաժանել նախ ընծաներս:
Ի հարկէ իւրաքանչիւրին պէտք է տամ այն ըն-
ծան, որ նրան ամենից շատ յաճելի է:
Իսկ երբ որ ընծաներս կը հասնեն, հերթը կը
գալ լոկ պարտական բարի ցանկութիւններին:

Գէորգ Եւանդոս Լանքարան ընծայում եմ անգ-
լիական լորդի տիտղոսը, ի հարկէ այդ տիտղոսից
անբաժան հարստութեամբ հանդերձ:

Սարգիս Գաւառ Լանքարան մի նոր գտակ:

Յովնանէս Չիգի Լանքարան Բենիէի մադա-
դինից շաբաթից չինած գառը, որ սովորապէս
անուանվում է «Աստուծո գառը»:

Արզար 8 զհանդիս Եւանդոս երկու ընծայ.
1) երկու գիւղի նոր պաշտօններ, կրօնի ռոճիկ-
ներով, և 2) մի ոսկեայ գրչի լրագրական ընթեր-
սանքի կողմից, հետեւեալ արձանագրութեամբ.
Գլխաւոր ազատամիտ ձայնաւորին, մուսուր կրա-

ՖԵԼԻՏԵՏՈՆ

Անցնում է արդէն մեծ պատը, երբ մարդիկ
պէտք է ապաշխարեն, բաւեն իրանց մեղքերը:
Հասնում է Ձատիկը, զարնան այդ գեղեցիկ
տօնը, երբ ծաղիկների հետ միասին բացվում են
և մարդկանց սրտերը ուրախութեան և սիրոյ
մէջ սկսվելու առնաւորը և ամենաշնորհալի բա-
նակին, մոռանաւ փոխադարձ ոխն ու ատե-
լութիւնը, միմեանց ձեռք մեկնեն, միմեանց ձեռք
սեղմեն, միմեանց համբուրեն, միմեանց կարմիր
ձու ընծայեն, կամ առհասարակ միմեանց ընծա-
ներ անեն, կամ վերջապէս գոնէ միմեանց բարի
ցանկութիւններ յայտնեն:

Եւ էլ նոյնն եմ ուզում անել: Իմ բոլոր ծա-
նօթներին ու բարեկամներին, որոնք մեր ընդհա-
նուր ծանօթներն են, ընթերցող, եւ կամենում
եմ նրանցից իւրաքանչիւրին մի մի կարմիր ձու
տալ, մի մի ընծայ անել, կամ գոնէ մի մի բարի
ցանկութիւն յայտնել:

Բայց ովքեր են ֆելիետոնիստի բարի ծանօթ-
ները, ովքեր են նրա բարեկամները,—զրանք մեր
բոլոր հասարակաց գործիչներն են:

Ահ, ընթերցող, եթէ գիտենայիր ինչ ազդե-
ցութիւն է ունեցել Թիֆլիսում «Մշակ» № 35
մէջ հրատարակված ֆելիետոնս, որ պարունակում

1882-ին ստացվել է միայն 857 պուդ. բոժոժ:
Շա մ ա խ ու գ աւ առ ու մ պարապու մ են չերպմա-
պահութեան 44 գիւղի բնակիչներ. մինչև որդի
հիւանդութեան երևալը նրանք պահում էին 440
ֆունտ սերմ, որոնցից ստացվում էր 7,190 պուդ.
բոժոժ. այն ինչ 1882 թ. ստացվել է ընդամենը
միայն 650 պուդ. բոժոժ: Ջ ի բ ը ա յ ե լ ի գ աւ ա-
ռ ու մ 1868 թվին 432 ֆունտ սերմից ստացվել է
3,364 պուդ. բոժոժ. 1882 թ. պահած մօտ 457
ֆ. սերմից ստացվել է 743 պուդ. բոժոժ:
Կարծում ենք, որ վերոյիշեալ թիւերը կարող կը
լինեն վերջապէս համոզել այն անձանց, որոնք
չառ տարիներ ընթացքում անընդհատ քարոզում
են, որ իբրև թէ կովկասեան շերամապահութիւնը
բարեալաճ է ծաղկած դրութեան մէջ է գտնվում,
որ նրանց ասածները հակառակն է կատարվում
իրականութեան մէջ: Պէտք է աւելացնել այստեղ
որ Ֆրանսիան իւրաքանչիւր տարի արտադրում է
510 միլիոն ֆրանկի մետաքսեղէն և որ խոսքիս
ստանում է իւրաքանչիւր տարի մօտաւորապէս
153,750 պուդ. մետաքս:

Մ. Ն.

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԻՆ

Ջատիկ տօների պատճառով «Մշակի» հետեւեալ
42-րդ համարը կը հրատարակենք հինգշաբթի օր,
ապրիլի 17-ին:

Ստացանք Մօսկվայում տպւած մի հայերէն
գրքի «Հայոց վանքերը» վերնագրով, համառօտ
տեսութիւն Կ. Կոստանեանցի: Տպւած է ներկայ
1886 թվին: Գրքից զին 50 կողմէ է: Յայտնի
է, որ պ. Կոստանեանցի ունի և մի քանի այլ
գրական հեղինակութիւններ, մեծ մասամբ լեզուա-
գիտական և պատմական: Գրքից ի տիպը շատ
գեղեցիկ է:

Մեզ դուռ են հետեւեալ. «Անցնելով թիֆլիսի
հայոց եկեղեցիներից շատերի մօտով, մարդ ակա-
մայ կանգնում է նայում է այն միայրկանի, հնա-
ցած, խորտուկ, անխնամ թողած շինութիւնների
վրա, որոնք պատկանում են եկեղեցիներին: Մեր
եկեղեցական կալուածների անխնամ դրութիւնը,
ոչ միայն նիւթական քննա է հասցնում հայոց
մեծ մասամբ աղքատ եկեղեցիներին, այլ և մար-
դուն շատ վատ դարձրել է տալիս հայոց եկե-
ղեցական վարչութիւնների ունեցած եռանդին և
հոգատարութեան վրա»:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
կովկասեան շրթայի վրայով երկաթուղու գիծ
անցկացնելու հարցը նորից յարուցված է: Գծի
երկու ծայրի կէտերը կը լինեն Վլադիկավկասեան
գծի վրա Գարկ-Կօս կայարանը և Անդրկովկա-
սեան գծի վրա Գորին: Նախագիծն նայած, գծի

կի դէմ ապահովութեան ընկերութեան տեսչին, ե-
րախտագէտ Բէպտիստինի կողմից:

Գէորգ Աբրահամյան. ցմահ Ներսիսեան
դպրոցի հոգաբարձուի պաշտօն:

Խշխան Կօստանյան Ռէհր Երեմիային,—
шаху невидимку.

Պետրոս Սիմէօն Երեմիային երեք ընծայ. 1)
հայերէն քերականութիւն, 2) լօգիկայի դասագիրք
և 3) մի պօղօրօթիս դէպքի լեզմաբան:

Բժիշկ Սամսոն Մայսուրեանցիին, մի ահա-
ղին վիրաբուժական դասակ, որպէս զի գործածելով
նրան Ներսիսեան դպրոցում, կարողանայ դառ-
նալ վիրաբույժ—հոգաբարձու:

Բժիշկ Մարկիանոս Ռօտիսեանցիին,—այն
քանի շապիկները, որ Գէորգ Աբրահամյան պա-
տուիրում է Ներսիսեան դպրոցի որդեգիրներին
համար:

Մէլքիսեդէկ Մուրադեանցիին,—Սպանդար
Սպանդարեանի «Oeuvres complètes» կազմի վրա
ուկեայ տառերով դրօշմված. «Sic transit gloria
mundi.»

Յովհաննէս Ղորղանեանցիին. «Մշակի» մի
մշտական էջի աբօնմէնտ, նրանից սպասելի պա-
տասխանները գեղեցիկ և համար:

Երկարութիւնը կը լինի 183 վերստ, և ծախսը
38—46 միլիոն ռուբլի:

Ներքին գործոց նախարարութեան մէջ շուտով
կը մշակվի մի նախագիծ, տեղական վարչութիւն-
ների մէջ մասնաւոր փոփոխութիւններ մտցնելու
համար: Մի և նոյն ժամանակ ընդլայնում կառ-
նուկ և մի ուրիշ հարց, որով ցանկութիւն կայ
հանել ոտովիանութեան գործունէութեան չըջա-
նից մի քանի պարտաւորութիւնների կատարելը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
առևտրական կանոնադրութեան վերջին նախա-
գիծը ենթարկվեցաւ նշանաւոր փոփոխութիւննե-
րի:

Թիֆլիսից դէպի Աւստրա անցկացրած հեռախո-
սական գիծը շուտով բոլորովին պատրաստ կը
լինի:

Մարտի 31-ին Նախընտրի մօտ դռնվող աղիւսի
գործարանում մեռաւ Ղազարի գաւառի բնակիչ
Ղարաբեզով Վարդանեան, մնալով յանկարծակի
քանդված փառակներու տակ:

Ամսի 8-ին կայացաւ կովկասեան գիւղատնտե-
սական ընկերութեան ընհանուր ժողովի նիստը:
Նիստից զործերը վերջացնելուց յետոյ նախագա-
նը կարգաց պետական կալուածների միջնորդու-
թեան գիւղատնտեսական բաժանմունքի կող-
մից ստացած թուղթը, որից երևում է, որ ծխա-
խոտի արդիւնաբերութիւնը զարգացնելու և զորա
համար զանազան միջոցներ ձեռք առնելու նպա-
տակով այս ամառ պիտի լինի ծխախոտ արդիւ-
նաբերողների ընդհանուր ժողով Պետերբուրգում:

Այդ ժողովին մասնակցելու համար խնդրվում է
Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութիւնից ցրոյց
տալ Անդրկովկասում ծխախոտ արդիւնաբերողնե-
րից այն անձանց վրա, որոնք ծանօթ լինելով
գործին, կարող կը լինեն մասնակցել ընդհանուր
ժողովին և նպաստել խնդրի պարզվելուն: Պ. Էն-
ֆիաճեանց, որ ներկայ էր ժողովին, նկատեց, որ
այնպիսի մարդոց վրա պէտք է մատնանիլ անել,
որոնք տեղեակ լինելով կարող լինեն պաշտպանել
մեր երկրի ծխախոտի արդիւնաբերութեան գործը:
Որոշուեցաւ առաջարկել պ. Էնֆիաճեանին և
Սարգսեանին: Ապա Թիֆլիսի կաթի կեղծելու և
այդ բանի առաջին առնելու համար միջոցներ
գտնելու նպատակով կազմուած յանձնաժողովը
ներկայացրեց իր եզրակացութիւնը: Այդ յանձնա-
ժողովին մասնակցել են Գիւղատնտեսական ընկե-
րութեան կողմից պ. Ստրուկ, բժիշկ Կարպովիչ և
պ. Կ. Շադինեան և վարդանեան. քաղաքի վար-
չութեան կողմից պ. Խոսրօնի, և բժշկական ըն-
կերութեան կողմից բժիշկ Բաբօյ: Գանձաժողովը
յայտնեց, թէ յիշուած Թիֆլիսի մէջ վաճառվող
կաթը կեղծվում է, և որ պէտք է միջոցներ ձեռք
առնել, բայց ի նկատի ունենալով, որ քաղաքա-

նելով ինձ մնում է իմ մնացած ծանօթներին
զատկվայ տօնի առիթով միմիայն բարի յաւն-
կութիւններ յայտնել:

Միջոց է թա մ ա մ շ ե ա ն ի ն ցանկանում եմ
Ներսիսեան դպրոցի համար էլ մի փոխառութիւն
իրագործել:

Վախի Գ. Եղ ա մ ե ա ն ի ն. եկող քառամեակի
համար Յովհաննէս Ղորղանեանի նորից քաղաքա-
գրու ընտրվելը:

Բժիշկ Աւետիք Բաբայեանցիին. հոգաբարձու-
ներից մինի իր պաշտօնից հրաժարվելը:

Բժիշկ Ստեփան Ան Ե ա ն ի ն. երբեք իր
մասնագիտութիւնը չը գործ դնել... Ներսիսեան
դպրոցում:

Սպանդար Սպանդարեանցիին. կրօնական
խնդրի մասին նորից բանակուի յարուցվելը, որ-
պէս զի նորից գրելու նիւթ ունենայ:

Վահրամ Եպիսկոպոս Մանկուսեան. իր մու-
րաղին հասնելը:

Ալեքսանդր Մէլք-Սպարեանցիին. իր ամբողջ
կենսութեան մէջ առ իմանալ միայնակ հանգիստ
ուէրի հետ:

Գէորգ Տէր-Ալեքսանդրեանցիին, փոխա-
դարձ կրէդիտի ընկերութեան վերաբնդողական
յանձնաժողովի անդամ լինելով նոյն գործը կա-
տարել և իր նոր հրատարակված գրքի վերաբե-
րութեամբ:

Նորէն վարդապետ Ստեփանեանցիին, օղափո-
խութիւն և համբերութեան մեծ պաշար:

Ջը մոռանալով Թիֆլիսի քաղաքացիին վաւ-

մի վարչութիւնը մտադիր է բոլոր միջոցներ
համար հիմնել մի առողջապահական բիւրօ, ուս-
տի յանձնաժողովը հարկաւոր չէ համարել մանկ
մանրամասնութիւնների մէջ: Բժիշկ Բաբօյ յայտ-
նեց այն կարծիքը, որ պէտք է հարցը աւելի խոր
ուսումնասիրել: Պ. Խոսրօնի կրկին յայտնեց որ
քաղաքային վարչութիւնը կաթի կօնտրօլի համար
առանձին գումար տալ անկարող է: Ակուսեցան
երկար միջաբանութիւններ: Գայտնեցան բազ-
մատեսակ կարծիքներ: Վերջում վիճաբանու-
թիւնները զարմանալի կերպարանք առան: Մէլք
ասում է, որ կօնտրօլ հաստատելը մեր բանը չէ,
միւսը նկատում է, որ կաթից աւելի հարկաւոր
բաներ կան, երրորդը բացականչում է որ այդ քա-
ղաքի բանն է, չորրորդը ասում է, որ պէտք է
խնդրել կենդանիների հովանաւորութեան ընկե-
րութիւնից, որ նա կովերի գոմերը լաւացնի, հին-
գերորդը պնդում է որ կովերի «անհատականու-
թիւնը» և կերակուրի «պրօնցիաները» մեծ նշա-
նակութիւն ունեն «համակրելի» կաթ ստանալու
մասին և այլն և այլն: Հասկանալի է, թէ այդ ուղ-
ղութեամբ շարունակելով ուր պիտի հասնէին: Նա-
խագահը փորձում է ձեռնկարգել խնդիրը, և վեր-
ջում կարեորութիւն է զգացվում շարունակել
մշակել և աւելի պարզել խնդիրը: Դրանից յետոյ
նիստը փակվեցաւ:

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է
մեզ հետեւեալ: Ազգային լուսաւորութեան միոխ-
տը ուսումնասիրական շրջանների հոգաբարձու-
ներից ուղղած շրջաբերականում մասնաւորաց է ա-
նում այն բանի վրա, որ առաջին կիսամեակում, ուս-
նայ համալսարանների վերաբերութեամբ սահմա-
նած նոր կանոնադրութիւնը իր գործադրութեան
օրից տուեց բաւարար հետեւեալներ և այս պատ-
ճառով յուսալի է որ ապագայում աւելի էլ աջող
կը լինի համալսարանների ուսումնական գործու-
նէութիւնը, եթէ նրան արգելք չեն լինի ուրիշ
ձեւասկար աղբեղութիւններ: Սակայն, շատ ցա-
ւալի է, որ վերջին ժամանակներում չարամիտնե-
րը նորից սկսեցին, բարեգործական պատրու-
կով, իրանց ցանցի մէջ դնել ուսանող երիտասար-
դութիւնից քանի մի անգղոյններին և անհաստա-
տամիտներին: Այս պատճառով միոխտը իր պար-
տականութիւն է համարում յիշեցնել հոգա-
բարձուներին և բէկտօրներին այն ընդարձակ լիա-
զօրութիւնների մասին, որ նրանց տալիս է նոր
կանոնադրութիւնը և առաջարկում է գործ դնել
բոլոր ջանքերը ապահովելու կարգապահութիւնը
և հանգստութիւնը համալսարաններում, որոնց
մէջ հիմա նորից սկսվել են խռովութիւնները:
Միոխտը խնդրում է արթնաբար հսկել աղիտա-
ցիայի ամեն մի երեւոյթների վրա, մասնաւոր
հսկել երիտասարդների վրա, որոնց մէջ նշմարե-
լի է լինում գործակցութիւն աղիտացիային կամ
հակում աղբեղութեանը ենթարկվելու: Կրկնապա-
տիկ ուսաւորութիւն դարձնել որ ուսանողները
կանոնաւոր կերպով այցելեն դասախօսութիւննե-

նելով ինձ մնում է իմ մնացած ծանօթներին
զատկվայ տօնի առիթով միմիայն բարի յաւն-
կութիւններ յայտնել:

Միջոց է թա մ ա մ շ ե ա ն ի ն ցանկանում եմ
Ներսիսեան դպրոցի համար էլ մի փոխառութիւն
իրագործել:

Վախի Գ. Եղ ա մ ե ա ն ի ն. եկող քառամեակի
համար Յովհաննէս Ղորղանեանի նորից քաղաքա-
գրու ընտրվելը:

Բժիշկ Աւետիք Բաբայեանցիին. հոգաբարձու-
ներից մինի իր պաշտօնից հրաժարվելը:

Բժիշկ Ստեփան Ան Ե ա ն ի ն. երբեք իր
մասնագիտութիւնը չը գործ դնել... Ներսիսեան
դպրոցում:

Սպանդար Սպանդարեանցիին. կրօնական
խնդրի մասին նորից բանակուի յարուցվելը, որ-
պէս զի նորից գրելու նիւթ ունենայ:

Վահրամ Եպիսկոպոս Մանկուսեան. իր մու-
րաղին հասնելը:

Ալեքսանդր Մէլք-Սպարեանցիին. իր ամբողջ
կենսութեան մէջ առ իմանալ միայնակ հանգիստ
ուէրի հետ:

Գէորգ Տէր-Ալեքսանդրեանցիին, փոխա-
դարձ կրէդիտի ընկերութեան վերաբնդողական
յանձնաժողովի անդամ լինելով նոյն գործը կա-
տարել և իր նոր հրատարակված գրքի վերաբե-
րութեամբ:

Նորէն վարդապետ Ստեփանեանցիին, օղափո-
խութիւն և համբերութեան մեծ պաշար:

Ջը մոռանալով Թիֆլիսի քաղաքացիին վաւ-

րը, նոյնպէս ուսաւորութիւն դարձնել ձեւասկա-
ր ուղղութեան վրա որ երբեմն արտայայտվում է
ամենաանհիշելի բանում, օրինակ անմաքաւորու-
թեան և կոպտութեան մէջ: Հարկաւոր դէպքում
համալսարանի գլխաւորները պէտք է ոտովիանու-
թեան հետ յարաբերութեան մէջ մտնեն, օգտու-
լով նրա գործակցութիւնից և իր կողմից գործա-
կցեն ոտովիանութեանը: Բացի սրանից միոխտը
առաջարկում է հոգաբարձուներին համալսարա-
նական քաղաքների մէջ եղած քաղաքական վար-
չութեան ներկայացուցիչների հետ մասնաւոր յարա-
բերութիւնների մէջ մտնել, նրանց հետ միահամուռ
գործելով, գերծ պահելու համար ուսանող երիտա-
սարդութիւնը պատկի և պարտաւորութեան ձա-
նապարհից նրանց չեղող ամեն ձեւասկար
աղբեղութիւնից և նրանց համոզելու ճշգրտեալ
յանքով համալսարանը: Այսպէս վարվելով, ա-
սում է միոխտը, և իր ժամանակին ուսանողնե-
րից հեռացնելով կասկածաւոր անդամներին, բար-
ձրագոյն կառավարութիւնը ազատ կը լինի, նշա-
նաւոր թիւով ուսանողների վերաբերութեամբ
խիստ միջոցներին դիմելու ցաւալի անհրաժեշ-
տութիւնից:

«Кавказ» լրագրում կարդում ենք, որ Կովկա-
սում յայտնի ուսումնական, հանգուցեալ Ա. Պ.
Բէրժէի կենսագրութիւնը այս օրերս լոյս տեսաւ:
պ. Կորեակովի հեղինակութեամբ: Գրքի նպատակն
է մի կողմից ծանօթացնել հասարակութիւնը հան-
գուցեալի կենսի և գործունէութեան հետ, իսկ
միւս կողմից նպաստել հանգուցեալի գերեզմանի
վրա արձանի կանգնեցնելուն:

Յայտնի է, որ Թիֆլիսի Միջնորդ կայ կտալի գոր-
ծարան, որ պատկանում է Գ. Մ. Միլոսին: Այդ
գործարանը կապալով տուած էր մի քանի տարով
Ֆրանսիայի պ. Ռիշարին: Այժմ կապալի ժամա-
նակամիջոցը անցած լինելով, պ. Ռիշար այլ ևս
չը յօժարեց նորոգել կապալը և գործարանը առ-
ժամանակ փակվեցաւ: Եւ ահա այդ գործարանի
մէջ բանող 300 բանւորներից աւելի, որոնք իրանց
աշխատանքով թէ իրանց անձն էին պահում թէ
իրանց ընտանիքը, մնացին անգործ և թշուառ
դրութեան մէջ:

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը
տպագրելու համար: «Յայտնի է, որ ամեն տարի
մեծ գումարներ են ծախվում հայոց ուսումնարան-
ներում աշակերտներին նօսայով երդեցողութիւնը
սովորեցնելու համար, և մասնաւոր Ներսիսեան
դպրոցում, ուր սկսած առաջին դասատանից մինչև
ամենաբարձր սովորում են հայկական նօսայով
երդեցողութիւնը և ժամերգութիւնը: Բայց հասա-
րակութիւնը չէ տեսնում այդ երդեցիկ խմբի
արդիւնքը: Ոչ մի տեղ հասարակութիւնը չէ լսում
սրանց երդեցողութիւնը: Չէ որ Ներսիսեան դըպ-
րոցի սաները պատրաստվում են հոգեւորականներ
լինելու, ինչի ուրեմն, չեն մտածում երդեցնել ա-

չ ու թ իւ ն ը, որին ցանկանում եմ մեծ շահ, մեծ
եկամուտ ստանալ այն տարօրինակ բարձրակի-
ւալի լինանից, որոնց անցողը դուք ուղիւ
բանի տեղ է ընդունում, բայց որոնց վրա պէտք
է յայտարարութիւններ կայցնել:

Թիֆլիսի Բ. Ե ա կ ի ն ի ն ցանկանում եմ
Ջուր ունենալ իրանց մօտ շինվող նոր ջրանցքի
խողովակների մէջ:

Թիֆլիսի Գ. Ե ա տ ն տ ե ս ա կ ա ն ը ն կ ե-
ր ու թ ե ա ն անդամներին, որոնք զգուշ
Թիֆլիսի կովերի կաթից, ցանկանում եմ վար-
ձել իրանց համար պ. Շադինեանին՝ ծծօր պաշ-
տօնով:

Վերջապէս, «Մշակի» լրագրութեանը ցան-
կանում եմ եկող տարին 20,000 բաժանորդ ու-
նենալ, իսկ այս տարի գոնէ իր եղած բաժանորդ-
ներից ապառիկների ստանալը:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԱՐԳԻՍ ՍԻՄԵՕՆԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅԸ, սրտի ցաւօք յայտնելով իր հօր, ՍԻՄԵՕՆ ՍԱՐԳՍԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅԻ մահը, խնայում է իր բարեկամներին և ծանօթներին, ներկայ գտնվել յուզարկաւորութեան, որ պիտի լինի ապրիլի 10-ին, առաւօտեան ժամը 9-ին հինգշաբթի, իր բնակարանից, որ գտնվում է Օլիւստայայ փողոցի վրա, Օհանջանովի տանը, № 5, դէպի Զրկինեանց եկեղեցին, իսկ այնտեղից խոջիվանքի գերեզմանատունը:

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Զորեջարթի, ապրիլի 16-ին, «ԱՆԱՏՈԼԻԱ» (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOCHEL) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս, Զմիւռնիա և Մարսէյլ: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիճեան և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունու գալլերեան, № 103.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
„MESSAGERIES MARITIMES“
(ՄԵՍՍԵՋԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Զորեջարթի օրը, 15-ին ապրիլի SINDH (Սինդհ) շոգենաւը, նաւապետ LAF. FONT (Լաֆօն) զուրա կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ ուղիղ դէպի ՄԱՐՍԵԼ, Տրապիզոն, Կիրազուդի, Սամսոն, Ինքուլուի, Կ. Պոլիս և Զմիւռնիայի վրայով: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒՄ պ. պ. ԷԼԼԵՐՍ ԲՈՒՐԿՀԱՐԳԻՆ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՈՐԳ ՀԵՃՈՒՐԵԱՆ ՀԵՃՈՒՐԵԱՆՅԻՆ:

ԹՈՅԼՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԴԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Մելանջ. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց: Գինը 2 ռ. սրտակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

հոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ռ. 75 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ արթնում երեսի քրտնաբերից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ռ. 50 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կօմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բաղամբ—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, և բնական շիւքին և ձեռքերին քնքշողութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարի ծնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշաւ:

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆ ՄՍԱՅԱՆ ՊՕՄԱԿ

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անսխառք երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրտակի համար 1 ռ. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բաղամբ, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ռ. սրտակի համար:

Ձեռքերի օրմադ: Գինը սրտակի համար 1 ռ. 30 կ.: Իւրաքանչիւր սրտակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի վրէժնով 1 ռ. 50 կ., առանց վրէժնի 1 ռ. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ռ. Ներկը «Բիս-Գուտմանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվին և Կ. Գեղատան ապրանքների մագազինում, «Ընդուն» հիւրանոցի տակ, Զուգարովի տանը:

ՀԱՃՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Յ Ի

91-ն Ապրիլի 1886

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազումայ բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազումայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	38,525—54	11,432—52	49,958—06	1. Հիմնական դրամադրուխ.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	1,240,101—27	235,000 —	1,475,101—27	2. Պահեստի դրամադրուխ.....	138,124—46	—	138,124—46
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.....	1,982,628—99	98,927—09	2,081,556—08	3. Դրամական աւանդներ՝			
4. Զեղչումն տոկոսաբեր թղթերի, կարծնների և այլն.....	—	—	4,158—18	ա) Պայմանաժամով.....	1,594,889—40	4,520 —	1,599,409—40
5. Փոխադրութիւն գրաւականով՝	790,021—78	5,940 —	795,961—78	բ) ԳՊՀ-ով.....	343,015 —	10,300 —	353,315 —
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	243,589 —	1,125 —	244,714 —	գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.....	1,178,702—07	66,077—80	1,244,779—87
բ) » ոչ ապահ. » »	14,840 —	—	14,840 —	դ) » պայմանաւոր.....	—	77,902—31	77,902—31
գ) ապրանքների.....	183,867—23	7,000—10	190,867—33	4. Թղթակիցներ՝			
6. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	9,992—62	—	9,992—62	ա) Նոյա հաշիւը (Loro).....	876,188—89	—	876,188—89
7. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր..	889,091—80	—	889,091—80	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	930,060—89	—	930,060—89
8. Թղթակիցներ՝	702,648—23	—	702,648—23	5. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ.....	—	345,818—32	345,818—32
ա) Նոյա հաշիւ (Loro).....	343,208—90	—	343,208—90	կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնի հետ.....	144,703—71	—	144,703—71
բ) Բանկայի հաշիւ (Nostro).....	—	147,453—71	147,453—71	6. Բանկայի բաժնետոմսերու անվճար կրտսնների բաշիւը 1882, 1883 և 1884 թ.	575—60	—	575—60
9. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ.....	14,316—37	—	14,316—37	7. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց.....	62,226—14	586—85	62,812—99
10. Բողոքուած մուրհակներ.....	8,902 —	—	8,902 —	8. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	64,370—73	3,386—53	67,757—26
11. Պայմանաժամը անցուցուած փոխադրութիւններ.....	11,398—05	2,284—01	13,682—06	9. Փոխանցիկ դուաններ.....	18,223—92	2,782—44	21,006—36
12. Ընթացիկ ծախսեր.....	4,074—98	2,042—72	6,117—70	10. Արդիւնք 1885 թ.....	138,140—08	—	138,140—08
13. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	7,855—95	169—10	8,025—05				
14. Յետ ստացուելիք ծախսեր.....							
Բ. Ա.	6,489,220—89	511,374—25	7,000,595—14	Բ. Ա.	6,489,220—89	511,374—25	7,000,595—14

Ս Պ Բ Ի Լ Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց 1886 թ.

ԱՆԴԻԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ	ՇՈԳՆԱԽԵՐ «Ռուսաց ընկ. նաւաքնացութեան և առևտրի»	ՓՕՍԱՑԻՆ ԿԱՌՔԵՐ	ԹԻՖԼԻՍԻ ՊԵՏՈՑՔՆԵՐԻ ՏԱԿՍԱ
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում փոստային գնացքը գնում է առաւօտ. 8 Ժ. 35 ր	ՀԻՆԴՇԱԲԹԻ 4 ժամին կէս օրից յետոյ շոգենաւը գնում է ուղղակի ընթացիկ ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕՐԷՍՍԱ:	ԹԻՖԼԻՍԻՑ Վաղդիկավկաս փոստ. կառքը գնում է առաւօտեան 8 ժամին և համարում է Վաղդիկավկաս 6-ին կամ 7 ժամին:	Թխած հաց կրուպչատկա ալիւրից ֆուն. 5 կօպ. 3 օրենի ալիւրից 1 տեսակի — 2 1/2 » 2 — 2 »
ԲԱԹՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է երեկ. 10 » 25 »	ՇԱԲԱԹ 8 ժամ. երեկոյ. շրջական ընթացիկ ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕՐԷՍՍԱ:	ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ զուրա է գնում առաւօտեան 9 ժամին և համարում է Թիֆլիս 5 կամ 5 1/2 ժամին:	Թօնրի մէջ թխած հացի ֆուն. 1 տեսակ 4 1/2 » 2 — 3 » 3 — 2 1/2 »
ԹԻՖԼԻՍԻՑ Բազում գնում է երեկոյ. 10 » 55 »	ԿԻՐԱՎԿԻ երեկոյեան արտասահմանեան ընթացիկ ԲԱԹՈՒՄԻՑ դէպի Կ. ՊՕԼԻՍ:	Կառքերը, որոնք ճանապարհին չեն գիշերում, ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Վաղդիկավկաս գնում են 4 ժամին կէսօրից յետոյ, նոյնպէս և Վաղդիկավկասից դէպի Թիֆլիս:	Կրուպչ. և ցորենից լավաշներ 1 տեսակի 4 1/2 » 2 — 3 1/2 » 3 — 3 »
ԲԱԳՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է առ. 8 » — »			Տաւարի մսի ֆունտը 1 տեսակի 8 » 2 — 7 » Սուկի — 14 »
ԹԻՖԼԻՍԻՑ Սուրամ ապր. պաս. գնացքը գնում է կէսօրից յետոյ . . . 3 » 15 »	Շոգենաւերը գալիս են ԲԱԹՈՒՄ. Երեք շաբթի երեկոյեան Օրդուայից, ուրբաթ առաւ. Օրդուայից (ուղղակի ընթացիկ) և շաբաթ առաւ. Կ. Պոլսից:		Ոչխարի մսի ֆունտը. 9 » Խոզի մսի ֆունտը. — »
ՍՈՒՐԱՄԻՑ Թիֆլիս գալիս է առ. 8 » 24 »			